

նաւ, գաղափարը ամբողջացնելու համար. Յովհաննէս Արեւիկանին մէջ՝ մարդը երբէք դերասանին փառքը չաղօտացնէր:

Մանսթացնելով թիւրքահայերուն՝ իր դէմքն և իր կեանքը (ընդարձակ կենսագրութիւնը տեսնել կըկրի ձայնի մէջ, թիւ 25-27) կը մաղթենք հայ գործիչին՝ հաճոյքնեղուն գերագոյնը. — իր գաղափարականին իրագործումը: Աղարարութեան պարտիք մ'է հայ ժողովրդեան համար՝ արդիւնաւոր անցեալը վարձատրել, ինչպէս խոստումնալից ասպազանները խրախուսել: Թող հայ մամուլը միայն փառքի և երջանկութեան օրեր պատմագրէ՝ Յ. Արեւիկանի ու կեղէն յրեւեանը տօնած ժամանակ:

Խ Մ Բ .



Օ Ր Օ Ր

(Մի գլուխ «Տարածի Արծիւն» պօլմայից).

I.

Հինաւուրց մի գետ առաջ էր վազում, Ու գիշեր ցերեկ խորունկ հառաչով՝ լուռ շրջակայքի հանգիստն աղմուկում: Եւ որպէս լալկան մի հէջ սիրակար խոր գետն երգում էր իր երգը ցաւոտ, Որ վշտոտ հոգուն յիշում է անվերջ Յաւազար սրտի մի անուշ կարօտ: Իսկ մութ ձորերի, ժայռերի միջից Այդ գետն հինաւուրց, դարեր շարունակ Հանում էր այդպէս մի անվերջ վայուն, Մի կոծ ու աղմուկ, խորունկ աղաղակ: Ո՛չ գիշերային շողքերը լուսնի, Ո՛չ մեղմ շշուշի կայտառ զեփուրի Չէին ընդհատում այդ խոր հառաչը Դարերից հետէ ալմկող գետի, Որն ինչպէս մի հէջ, մոռացուած էակ Մենակ, գլխակոր գնում էր առաջ, Որի խեղճ հոգին մենակ էր տանում իրեն վիճակուած տանջանքն ու հառաչ: Միայն երբեմն իր վիշտերն ասելու Հեռաւոր տեղից քամին էր գալիս, Որի ցաւի հետ իր ցաւը խառնած՝ Աւելի տխուր խոր գետն էր լալիս:

Իսկ այն խոր գետի բարձունքի վերայ կանգնած էր հպարտ մի բերդ անառիկ, Եւ գիշեր ցերեկ ականջ էր դրնում Այն ցաւոտ հոգու երգերին մեղմիկ: Վհէ էր այն բերդը, ահեղ, անասան ինչպէս մի վիշապ խրոխտ, ամենի, Որի բարձունքից հողմն իսկ իր թեւով Չէր համարձակվում թռչի ու անցնի: Հաստ պարիսպներ որպէս պինդ ժայռեր Բարձրանում էին նրա չորս կողմում, Եւ որպէս մի մօր զգուռը բազուկներ՝ Իրանց զրկի մէջ բերդն էին սեղմում: Սակայն այն բերդն էլ լուռ էր ու տխուր Որպէս մի փարոս ջահը չէր վառվում, Եւ իր ոսկեգօծ զոյներով սիրուն Գետի ալիքներ նա չէր հրդեհում: Մութն էր ու խաւար այն ահեղ բերդը, Մութն էր ինչպէս մի ահաբեկ գիշեր, Որը միշտ գիտէ մարդկանց ականջից կամաց փսփսալ խորունկ գաղտնիքներ... Որն իր սարսափով գիտէ ներշնչել նրազող հոգուն այնքան մութ բաներ, Որի ահաւոր, սեւ խորքիցն անգամ՝ Առաջ են գալիս այնքան սեւ մտքեր: Իսկ համատարած այդ խոր մթի մէջ Եւ երկինքի ամպած և բերդն ահաւոր, կարծես սեւ հագած լուռ լուռ էին թէ ի՛նչ է ասում այն գետն ալեւոր: Եւ լաւ էր լավում խաւարի միջից խեղճ սգաւորի հեծեծանքն ուժգին, խաւարն էլ ունի մի աղի արցունք, Որ միշտ կը խառնէ վշտի մորմոքին...

II.

Լոկի ամրոցի մի խուլ սենեակում Յանկարծ վառուեցաւ մի ոսկեայ կանթեղ Եւ լուսաւորեց զարդարանքն անթիւ Այդ մեծ սենեակի փարթամ, փառահեղ, Օրորոցի մօտ նստած միայնակ Մի պտառ դայեակ օ՞ր օ՞ր էր ասում, Եւ իր երգերի թովիչ ձայներով Մի փորձիկ մանկան անուշ քուն բերում: Անուշ էր հնչվում փարթամ սենեակում Գաղցր մրմունջը պտառ դայեակի, Անուշ էր հնչվում օրորի երգը՝

Մօրից անջատուած մանուկ իշխանի :
 Վաղուց չէր որ նրա մայրը սիրասուն
 Յանձնել էր նրան պառաւ դայեակին,
 Իսկ ինքը որպէս մի ռազմիկ անվախ՝
 Խառնուել էր շայոց կանանց բանակին
 Որ Գայլ վահանի ահեղ գնդէ հետ
 Պարսից զօրքի դէմ կոխ պէտք է տար,
 Որ կրակ դարձած, փրփրած ու ահեղ՝
 Որպէս մի հեղեղ առաջ կը խաղար :
 Իսկ խոր գիշերուայ այդ լոճի ժամին
 Լսուում էր միայն շոփինն որբանի,
 Եւ կամ զգացուած, անուշ ու անդորր
 Բազրալուր երզը պառաւ դայեակի. —
 « Գուր հով արէք, դուր զով արէք
 Դո՛ւր, ո՛վ ամպեր հետաւոր,
 Որ խոր քընի իմ մանկիկը,
 Քընի խաղաղ ու անդորր » :
 « Հանդարտ անցիր անուշ զեփիւռ
 Քո միալար վայունով,
 Որ մանկիկս անուշ քընի,
 Քընի երկար, անվրդով » :
 « Մի՛ սոսափիր ծերուկ անտառ
 Մեղմ ու անուշ շշնջալ,
 Տես ի՛նչ անուշ, ի՛նչպէս խաղաղ
 Իմ մանկիկը կը մընջայ :
 « Գու էլ լո՛րք քո հառաջը
 Անուշ վտակ կարկաչուն,
 Որ մանկիկիս չյիշեցնես
 Կարօտ մօրը սիրասուն » :
 « Նա հեռու է, իմ տիրուհին,
 Հեռու, հեռու դաշտերում,
 Որ շաչում են գէնք ու զրահ,
 Որ մըրիկն է որտում » :
 « Խաղաղ անցիր անուշ վտակ,
 Եւ դու զեփիւռ հետաւոր,
 Որ մանկիկըս երկար քընի,
 Քընի խաղաղ ու անդորր » :

III.

Եւ այսպէս երկար, երկար գիշերներ
 Երկու պառաւներ երգ էին երգում,
 Ու շրջակայքի հանգիստը խաղաղ՝
 Խրանց երգերի ձայնով վրդովում :
 Նրանցից մէկը խոր ձորի միջից
 Իր ցաւոտ վիշտն էր հառաչում ուժգին,

Միւսն էլ նստած որբանի առջեւ,
 Իր երգն էր ասում ձայնով ցաւագին :
 Երկուսն էլ յոգնած երկուսն էլ անգօր,
 Ոյժ էին տալիս իրանց երգերին,
 Որոնք բերում են կարճատեւ պատրանք
 Ցաւոտ ու տանջուած խեղճ հոգիներին :
 Որոնք միշտ կրնան կակիծը մարել
 Յաւազար հոգու վշտոտ խորքերում,
 Որոնք յիշելով ցաւերն ուրիշի՝
 Բերում են իրանց թեթեւ մոռացում :
 Իսկ էլ ի՛նչ ունի տառապող հոգին
 Իր անհուն ցաւին դարման անելու,
 Եթէ ոչ մի երգ տխուր, ցաւագին,
 Կամ մի լուռութիւն սեւ ու ահարկու :

ՊԵՏՐՈՍ ՄԱՃԱՌԱՅԱՆ

DALTONISME, PALUDISME, IMMUNITÉ, TYPHUS

ԱՍԽԱՆՈՒԱՆՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ

— Ա. Հ. Կ. Տ. Ս.

Արդարեւ Daltonisme լատին համար «Գոմայր-
 փոթ» լատիներէն է ըսմ «Ամբուստիտիս».
 Իսկ «Ֆոլթոնիստիս» միայնպէս է «Ֆալ-
 թոնիստիս»-էն, այս վերջին անիկ Mal de Daltonի
 համար է, որ թէպէտ գոյութիւն չունի՝ սա-
 կայն ըստ բժշկութեան մէջ ըմկալիս սովորու-
 թեամ մը Տալթոնի կամ Դայտոնի ուսումնասի-
 րած հիւանդութիւն ըսել է ինչպէս եմ Mal de Pott,
 Mal de Bright, կամ Maladie de Basedow, Mala-
 die de Ménière, Maladie de Duchenne... ևն, որք
 կը մշակուին որտի, Բուայի, Բազրտովի, ՄԷ-
 միէսի, Դիշէմի... գտած կամ ուսումնասիրած
 հիւանդութիւններն, և ոչ թէ՛ այդ անձերու հմ-
 թակայ եկած հիւանդութիւններն, ինչպէս կը մը-
 շանակէ Daltonisme.

Paludisme ի համար «Ճահմախտ» և «Մօրախտ»
 միայնպէս եմ ըսմ «Ծմակախտ», Ծմակ ըսում
 կարծես խոսմո՛ ձոր, ձորակ կը մշակուի, ու իր
 իջր ցանցի համազօրութեամ իմ ամեամօղ էր
 ցարդ :

«Մօրախտ», «Մօրասինդ» և «Ճահմախտ»
 կը համապատասխանեն «Fièvre Paludéenne»-ի,
 այսինքն «Ճահմախտ» կամ «Մօրախտ» ի ար-
 տայալութիւններէն միոյն, և ոչ ընդհանուր
 հիւանդութեան :

Immunité ըսելով համար «Ախտազերծութիւն»
 կը գերբնորիմ ըսմ «Անախտութիւն»-ն, որ կար-
 ծես անիլ բաշխողջութեան իմաստ կը ունայ :
 միջոցն անմ մը որ հիւանդութեան մը համըզպ
 պատագեթ է, մի այլ հիւանդութեան ետեպայ կըր-
 մայ ըլլայ :

Typbus հիւանդութեան համար «ժամտաչերմ»
 կ'աւաջարկէք. Ի՛նչ թիրութիւն կը փրագրէք իմ
 գործածած «ժամտախտ» ըսուիմ համար :

Գահիրէ, 20 Նոյ. 1907

Տ.